ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Ապրիլ 2026 | N° 7

Ինչպե՞ս կարող են ռազմական գործողությունները Իրանում ազդել Հայաստանի առևտրային հոսքերի վրա

2026 թվականի փետրվարի 28-ին Ամերիկայի Միացյալ Նահանգները (այսուհետ՝ ԱՄՆ) և Իսրայելը սկսեցին ակտիվ ռազմական գործողություններ Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ Իրան) դեմ, ինչին Իրանը հակադարձեց՝ հարվածներ հասցնելով Իսրայելի տարածքին, ինչպես նաև Մերձավոր Արևելքում գտնվող ԱՄՆ ռազմական բազաներին և կենսական նշանակության ենթակառուցվածքներին:

Իրանը Հայաստանի չորս սահմանակից երկրներից մեկն է, որի հետ Հայաստանը ունի սերտ տնտեսական համագործակցություն: Բացի այդ Իրանը Հայաստանի համար ունի բացառիկ տարանցիկ նշանակություն, որի տարածքով անցնում է երկրի արտաքին առևտրաշրջանառության շոշափելի մասը: Այս իրավիճակում ռազմական գործողությունների սրացումը կամ Իրանի տարածքով անցնող տրանսպորտային ենթակառուցվածքների խափանումը կարող են խաթարել Հայաստանի առևտրային հոսքերը և առաջացնել զգալի տնտեսական ռիսկեր:

Այս քաղաքականության համառոտագիրը նպատակ ունի ուսումնասիրել Իրանի դերը Հայաստանի արտաքին առևտրում, ինչպես նաև բացահայտել այն ապրանքներն ու տնտեսական գործունեության տեսակները, որոնք առավել խոցելի են ռազմական գործողությունների սրման և ենթակառուցվածքների խափանումների պայմաններում՝ միաժամանակ ուրվագծելով արտաքին առևտրի այլընտրանքային երթուղիներ:



Հայ-իրանական սահմանով Հայաստանի ապրանքային ներմուծումը

2025 թվականին Հայաստանի արտաքին առևտրաշրջանառությունը (ապրանքների արտահանում և ներմուծում) կազմել է **21 միլիարդ 430 միլիոն դոլար**, որի **9%-ը** իրականացվել է հայ-իրանական սահմանին գտնվող «Ագարակ» սահմանային անցակետի միջոցով (այսուհետ՝ Մեղրիի անցակետ):

Եթե բացառենք ոսկու (ԱՏԳ ԱԱ 7108) և ադամանդի (ԱՏԳ ԱԱ 7102) առևտրաշրջանառությունը, որոնք բարձրարժեք ապրանքներ են և մեծամասամբ արտահանվում ու ներմուծվում են օդային ճանապարհով, ապա կստացվի, որ 2025 թվականին ցամաքային ճանապարհով Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության 11%-ն իրականացվել է Մեղրիի անցակետի միջոցով: Ընդ որում, Մեղրիի անցակետին բաժին է հասել ցամաքային ճանապարհով Հայաստանի ներմուծման 14%-ը, իսկ արտահանման՝ 8%-ը:

2025 թվականին Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության 9%-ը իրականացվել է Մեղրիի անցակետով:

Քարտեզ 1. Հայաստանի սահմանային անցակետերը

Ընդ որում, հայ-իրանական սահմանով Հայաստանն առևտուր է իրականացնում ոչ միայն Իրանի, այլև երրորդ երկրների հետ, ինչը հավելյալ ընդգծում է Իրանի կարևորությունը Հայաստանի արտաքին առևտրում:

Ստորև առանձին կանդրադառնանք Մեղրիի սահմանային անցակետով իրականացվող ներմուծման և արտահանման կառուցվածքին:

2025 թվականին Հայաստանը ներմուծել է **13 միլիարդ 35 միլիոն դոլարի** ապրանքներ, որի **11%-ը** կամ **1 միլիարդ 477 միլիոն դոլարը** Մեղրիի անցակետով:

Գծապատկեր 1. Մեղրիի անցակետով ապրանքների ներմուծման մասնաբաժինը ՀՀ ներմուծման կառուցվածքում 2025 թվականին



Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ, ՀՀ ՎԿ

Հայ-իրանական սահմանով Հայաստան ներմուծվող ապրանքների հիմնական մասը կազմում են **իրանական և չինական ծագման ապրանքները**: 2025 թվականին ընդհանուր ներմուծման մեջ գրեթե կեսը (**47% կամ 699 միլիոն դոլար**) բաժին է հասել իրանական ապրանքներին, իսկ **42%-ը կամ 625 միլիոն դոլարը՝** չինական ծագման ապրանքներին: Միաժամանակ հարկ է նկատել, որ Մեղրիի անցակետով Հայաստանի ներմուծման կառուցվածքը որոշ չափով տարբերվում է՝ կախված նրանից, թե դիտարկվում է ապրանքի ծագման երկիրը, թե արտահանող երկիրը: Այս տարբերությունը պայմանավորված է նրանով, որ հայ-իրանական սահմանով Հայաստան են ներմուծվում նաև այնպիսի ապրանքներ, որոնք արտադրված են մեկ երկրում, բայց Հայաստան են հասնում մեկ այլ երկրի միջոցով: Օրինակ՝ չինական ծագման որոշ ապրանքներ Հայաստան են ներմուծվում ոչ թե ուղղակի Չինաստանից, այլ երրորդ երկրների տնտեսավարողների միջոցով: Մասնավորապես, նման շղթաներ հաճախ հանդիպում են ԱՄԷ-ից ներմուծումների դեպքում, երբ չինական արտադրության սարքավորումները և ավտոմեքենաները ձեռք են բերում ԱՄԷ-ում գրանցված տնտեսավարողները, ապա վերավաճառում հայաստանյան տնտեսավարողներին: Այսպիսով, կարելի է ասել, որ Մեղրիի անցակետը հիմնականում ծառայում է այս երեք երկրների հետ առևտրին:

Նախորդ տարի Մեղրիի անցակետով Հայաստան **ներմուծված իրանական ծագման ապրանքներում** հիմնականում գերակշռում են հանքային արտադրանքը (բնական գազ, նավթամթերք, ցեմենտ և այլն), ոչ թանկարժեք մետաղներից արտադրատեսակները (երկաթից ձողեր, գլանվածքներ և այլն), ինչպես նաև պլաստմասսան և դրանցից պատրաստված արտադրանքը: Ընդհանուր առմամբ, 2025 թվականին այս անցակետով ներմուծվել է **իրանական ծագման 1,473 անուն ապրանք** (ըստ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 6-նիշ ծածկագրի), ինչը ցույց է տալիս, որ թեև կառուցվածքը կենտրոնացված է որոշ հիմնական խմբերի շուրջ, այնուամենայնիվ առկա է նաև որոշակի բազմազանություն:

Չինական ծագման ապրանքների ներմուծման տեսականին շատ ավելի բազմազան է: 2025 թվականին Մեղրիի անցակետով Հայաստան է ներմուծվել **չինական ծագման 2,393 անուն ապրանք**: Հայ-իրանական սահմանով Հայաստան ներմուծված չինական ապրանքների մեջ առավել հաճախ հանդիպում են սարքավորումները, վերգետնյա տրանսպորտային միջոցները, պլաստմասսաները և դրանցից պատրաստված արտադրատեսակները, ինչպես նաև տարբեր այլ արդյունաբերական ապրանքներ:

Հայ-իրանական սահմանով Հայաստան ներմուծվող ապրանքների հիմնական մասը կազմում են իրանական և չինական ծագման ապրանքները:

Գծապատկեր 2. Մեղրիի անցակետով ՀՀ ներմուծումը ըստ ծագման երկրի 2025 թվականին



Գծապատկեր 3. Մեղրիի անցակետով ՀՀ ներմուծումը ըստ արտահանող երկրի 2025 թվականին



Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

Ընդհանուր առմամբ, 2025 թվականին հայ-իրանական սահմանով Հայաստան է ներմուծվել **2,906 անուն ապրանք**: Ընդ որում ներմուծման 80%-ը բաժին է հասել ընդամենը 279 ապրանքի:

Ներմուծվող ապրանքների ցանկը գլխավորում է **բնական գազը**՝ 2025 թվականին **101 միլիոն դոլարի** ներմուծմամբ, ինչը կազմում է այդ տարի հայ-իրանական սահմանով ներմուծվող ապրանքների **7%-ը:** Իրանից բնական գազի արտահանումը Հայաստան իրականացվում է «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» հայ-իրանական ծրագրի շրջանակներում: 2009 թվականից ի վեր Հայաստանը Իրանից ներմուծում է բնական գազ, որի դիմաց Իրան է արտահանում էլեկտրաէներգիա:

Մեղրիի անցակետով ներմուծվող հաջորդ խոշոր ապրանքատեսակը շինարարության մեջ օգտագործվող **երկաթից ձողերն են (ատամնավոր ամրաններ)**: Այս ապրանքատեսակը, ինչպես և բնական գազը բացարձակապես իրանական ծագման է:

Իրան-Հայաստան գազամուղ
Աղբյուրը՝ 1lurer.am

Հայ-իրանական սահմանով ներմուծվող երրորդ խոշոր ապրանքը **մարդատար ավտոմեքենաներն են**: 2025 թվականին Մեղրիի անցակետով Հայաստան է ներմուծվել 3,578 մեքենա: Ավտոմեքենաների 96%-ը չինական արտադրության են, իսկ արտահանող երկիրը հիմնականում Չինաստանն է և ԱՄԷ-ն՝ համապատասխանաբար, 80% և 17% մասնաբաժնով:

Հայաստանը Իրանից ներմուծում է շինարարության մեջ օգտագործվող կարևոր ապրանքներ, ինչպիսին են ցեմենտը, ատամնավոր ամրանները, նավթային բիտումը և այլն:

Գծապատկեր 4. Մեղրիի անցակետով Հայաստան ներմուծվող TOP 10 ապրանքները (առանց բնական գազի) 2025 թվականին



Նշում՝ վանդակներում նշված են տվյալ ապրանքների մասնաբաժինը Մեղրիի անցակետով ներմուծվող ապրանքների կառուցվածքում
Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ

Հայաստանը Իրանից նաև ներմուծում է շինարարության մեջ օգտագործվող տարբեր ապրանքներ: Այսպես, նախորդ տարի հայ-իրանական սահմանով ներմուծվող չորրորդ խոշոր ապրանքատեսակը (դոլարային արժեքով) ասֆալտաբետոնի արտադրության համար օգտագործվող **նավթային բիտումն էր**:

2025 թվականին այս ապրանքի ներմուծումը կազմել է շուրջ 35 միլիոն դոլար՝ ապահովելով անցակետով ներմուծվող ապրանքների մոտ 2%-ը: Բիտումի գրեթե ամբողջ ծավալը՝ մոտ 99%-ը, ներմուծվում է անմիջապես Իրանից, իսկ շատ փոքր մասը՝ Իրաքից:

Հայ-իրանական սահմանով Հայաստանի ապրանքային արտահանումը

2025 թվականին Հայաստանը արտահանել է **8 միլիարդ 395 միլիոն դոլարի** ապրանքներ, որի **6%-ը** կամ **531 միլիոն դոլարը** Մեղրիի անցակետով (Գծապատկեր 5):

Հայ-իրանական սահմանով Հայաստանից արտահանվող ապրանքների միայն **17%-ն** է (89 միլիոն դոլար) ուղղվում անմիջապես **Իրան**, իսկ մեծ մասը՝ 83%-ը (442 միլիոն դոլար), ուղղվում է երրորդ երկրներ: 2025 թվականին Մեղրիի անցակետով Հայաստանից արտահանվող ապրանքների զգալի մասը՝ 63%-ը, ուղղվել է Իրաք, իսկ 18%-ը՝ ԱՄԷ: Արտահանվող ապրանքների կառուցվածքն էլ բավականին սահմանափակ է: Իրանի տարածքով **Իրաք** հիմնականում արտահանվում են սիգարետներ (**86%**) և ծխախոտի տաքացվող գլանակներ (**12%**): ԱՄԷ արտահանման դեպքում ևս գերակշռում են սիգարետները, որոնք կազմում են ցամաքային ճանապարհով արտահանման շուրջ **94%-ը**:

2025 թվականին Հայաստանի արտահանման 6%-ը անցել է Մեղրիի անցակետով:

Գծապատկեր 5. Մեղրիի անցակետով ապրանքների արտահանման մասնաբաժինը ՀՀ արտահանման կառուցվածքում 2025 թվականին



Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ, ՀՀ ՎԿ

Հայաստանից **Իրան** արտահանման **84%-ը** կազմում է «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի շրջանակներում Իրան արտահանվող **էլեկտրաէներգիան**: Միաժամանակ, Հայաստանը Իրան է արտահանում նաև այլ ապրանքներ: Դրանցից ամենախոշորը պղնձի խտանյութն է, որը կազմում է արտահանման մոտ 8%-ը: Բացի այդ, արտահանվում են սիգարետի ֆիլտրեր (2%), սիգարետներ (1%), ինչպես նաև այլ ապրանքներ, որոնց բաժինը կազմում է մոտ 5%:

Հեղինակը՝ Արամ Ներսեսյան

Գծապատկեր 6. Մեղրիի անցակետով Հայաստանից արտահանվող ապրանքներն ըստ նշանակման երկրի 2025 թվականին



Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ

Մեղրիի անցակետով Հայաստանից արտահանման 73%-ը բաժին է հասնում սիգարետներին:

Ընդհանուր առմամբ, 2025 թվականին Հայաստանը Մեղրիի անցակետով՝ ըստ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 6-նիշ ծածկագրի, արտահանել/վերաարտահանել է **228 անուն ապրանք**: Հայ-իրանական սահմանով արտահանվում են «Լեքս Տոբակո Քոմփանի» ՍՊԸ-ն, «Գրանդ Տոբակո» ՍՊԸ-ն, «Մասիս Տոբակո» ՍՊԸ-ն, «ՍՊՍ Սիգարոն» ՍՊԸ-ն, ինչպես նաև «ՍԻՍ Նատուրալ», «Սանֆուդ», «Հոմլենդ Արմենիա» և այլ ընկերությունների արտադրանքները:

Արտահանման **73%-ը** բաժին է հասնում սիգարետներին: 2025 թվականին Հայաստանը հայ-իրանական սահմանով արտահանել կամ վերաարտահանել է **338 միլիոն դոլարի սիգարետ**: Պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ) էլեկտրաենրգիան ևս դասում է Մեղրիի անցակետով արտահանվող/վերաարտահանվող ապրանքների շարքին, այդ իսկ պատճառով հայ-իրանական սահմանով արտահանվող ամենախոշոր ապրանքների տասնյակում էլեկտրաէներգիան երկրորդն է: Էլեկտրաէներգիային հաջորդում է ծխախոտի տաքացվող գլանակները (38 միլիոն դոլար կամ Մեղրիի անցակետով արտահանման/վերաարտահանման 7%-ը), պղնձի խտանյութը (8 միլիոն դոլար կամ 1%) և այլ ապրանքներ:

Գծապատկեր 7. Մեղրիի անցակետով Հայաստանից արտահանվող TOP 10 ապրանքները (առանց էլեկտրաէներգիայի) 2025 թվականին



Նշում՝ վանդակներում նշված են տվյալ ապրանքի մասնաբաժինը Մեղրիի անցակետով արտահանվող ապրանքների կառուցվածքում
Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ

Սիգարետների հիմնական մասը՝ **74%-ը**, ուղղվում է Իրաք, ևս **23%-ը՝** ԱՄԷ, իսկ մնացած փոքր բաժինը՝ Հոնկոնգ, Չինաստան և Իրան: Ծխախոտի տաքացվող գլանակների վերաարտահանումը ամբողջությամբ կենտրոնացած է Իրաքի վրա: **Պղնձի խտանյութի** դեպքում հիմնական ուղղությունը Իրանն է՝ մոտ 90%, իսկ մնացած մասը արտահանվում է Չինաստան: Կենդանի կենդանիների արտահանման դեպքում ևս նկատվում է հստակ կենտրոնացում: **Ոչխարների 74%-ը** արտահանվում է Իրաք, իսկ 26%-ը՝ Քուվեյթ: Ինչ վերաբերում է խոշոր եղջերավոր անասուններին, ապա դրանք ամբողջությամբ արտահանվում են Իրաք:

Գծապատկեր 8. Մեղրիի անցակետով Հայաստանից արտահանվող/վերաարտահանվող TOP 5 ապրանքները (առանց էլեկտրաէներգիայի) ըստ նշանակման երկրների 2025 թվականին



Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ

Ներկայումս Հայաստանի կախվածությունը մեծ է Իրանից ներմուծվող շինանյութերից, սակայն երկաթի ձողերի և ցեմենտի դեպքում հնարավոր է դա կարճ ժամանակահատվածում փոխարինել տեղական արտադրության ապրանքներով:

Մեղրիի սահմանային անցակետի նշանակությունը Հայաստանի արտաքին առևտրի համար

Հասկանալու համար, թե ինչ նշանակություն ունի հայ-իրանական սահմանին գտնվող Մեղրիի անցակետը Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության համար, կարևոր է դիտարկել ոչ միայն այն, թե ինչ ապրանքներ են ներմուծվում և արտահանվում այս անցակետով, այլև հասկանալ, թե այդ **ապրանքների ընդհանուր ներմուծման և արտահանման ինչ մասն է անցնում հենց Մեղրիով**: Միաժամանակ, այստեղ անհրաժեշտ է մի կարևոր դիտարկում անել: Բնական գազը (ներմուծման դեպքում) և էլեկտրաէներգիան (արտահանման դեպքում) նպատակահարմար չէ դիտարկել նույն տրամաբանությամբ ինչ մյուս ապրանքները, քանի որ դրանք փոխկապակցված են: Իրանից ներմուծվող բնական գազը ամբողջությամբ օգտագործվում է «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի շրջանակներում՝ Իրան էլեկտրաէներգիա արտահանելու համար, այսինքն՝ այստեղ գործ ունենք փոխանակման մեխանիզմի, ոչ թե դասական առևտրի հետ:

Այլ ներմուծվող ապրանքների մասով՝ Հայաստանի 2025 թվականի ընդհանուր ապրանքային ներմուծման և հայ-իրանական սահմանով իրականացվող ներմուծման համեմատական ուսումնա-

սիրությունը ցույց է տալիս, որ Մեղրիի անցակետը որոշ ապրանքատեսակների համար առանձնահատուկ կարևոր դեր ունի: Մասնավորապես, 2025 թվականին **երկաթից ձողերի** ներմուծման գերակշիռ մասը՝ **89.1%-ը**, իրականացվում է հենց այս անցակետով: **Նավթային բիտումը** գրեթե ամբողջությամբ ներմուծվում է հայ-իրանական սահմանով, իսկ **ցեմենտի** դեպքում այդ բաժինը կազմում է **88.4%**: Նույն միտումն է նկատվում նաև **թրծված մոլիբդենի խտանյութի** դեպքում, որի ներմուծման **97.7%-ը** կատարվում է հայ-իրանական սահմանի միջոցով:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թեև ներկայումս Հայաստանի կախվածությունը մեծ է Իրանից ներմուծվող շինանյութերից, սակայն երկաթից ձողերի և ցեմենտի (այդ թվում՝ կլինկերի) դեպքում հնարավոր է դա կարճ ժամանակահատվածում փոխարինել տեղական արտադրության ապրանքներով, սակայն դա կարող է հանգեցնել այդ ապրանքների գների և շինարարության ընդհանուր ծախսերի աճի (հաշվի առնելով դրանց մասնաբաժինը շինարարության ծախսերի կառուցվածքում):

Աղյուսակ 1. Մեղրիի անցակետի նշանակությունը Հայաստան ներմուծվող ապրանքների համար

Ապրանքի անվանումը	ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Մեղրիի անցակետով ներմուծումը 2025 թվականին, հազար դոլար	Մասնաբաժինը Մեղրիի անցակետով ապրանքների ներմուծման մեջ 2025 թվականին	Մասնաբաժինը ՀՀ ներմուծվող այդ ապրանքի ներմուծման մեջ 2025 թվականին
Բնական գազ	271121	100,663	6.8%	21.4%
Երկաթից ձողեր	721420	68,086	4.6%	89.1%
Մարդատար ավտոմոբիլներ	8703	57,403	3.9%	8.8%
Նավթային բիտում	271320	35,415	2.4%	99.9%
Նավթամթերք	2710	33,994	2.3%	6.6%
Երկաթից կամ չլեգիրված պողպատից հարթ գլանվածք	7210	33,268	2.3%	61.6%
Մարդատար և բեռնատար ավտոմեքենաների անվադողեր	401110, 401120	30,238	2.0%	58.9%
Ցեմենտ (ներառյալ կլինկեր)	2523	28,171	1.9%	88.4%
Մոլիբդենի խտանյութ (թրծված)	261310	27,632	1.9%	97.7%
Խողովակներ (տրանսպորտային միջոցների համար)	7306 (առանց 730619	21,873	1.5%	58.2%
Ծխախոտի վերամշակված հումք	240319	18,085	1.2%	61.7%

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ, ՀՀ ՎԿ

Հայ-իրանական սահմանի նշանակությունը համեմատաբար մեծ է Հայաստանից արտահանվող սիգարետների և ծխախոտի տաքացվող գլանակների դեպքում: Մասնավորապես, 2025 թվականին Հայաստանից արտահանված **սիգարետների 62.5%-ը** արտահանվել է Մեղրիի անցակետով՝ հիմնականում ուղղվելով Իրաք և ԱՄԷ: Ընդ որում, Իրաքին բաժին է հասնում Հայաստանից արտահանվող սիգարետների շուրջ կեսը, և այդ մատակարարումները իրականացվում են հենց Իրանի տարածքով անցնող ուղով:

Ինչ վերաբերում է **ծխախոտի տաքացվող գլանակներին**, ապա 2025 թվականին այս ապրանքի վերաարտահանման 93.1%-ը իրականացվել է Մեղրիի սահմանային անցակետով: Սակայն կարևոր է նշել, որ այս ցուցանիշը հիմնականում վերաբերում է վերաարտահանմանը: Նույնը կարելի է ասել նաև մարդատար ավտոմեքենաների և Աղյուսակ 2-ում ներկայացված մի շարք այլ ապրանքների մասին, որոնց տեղական արտադրություն Հայաստանում չկա:

Աղյուսակ 2. Մեղրիի անցակետի նշանակությունը Հայաստանից արտահանվող ապրանքների համար

Ապրանքի անվանումը	ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Մեղրիի անցակետով արտահանումը 2025 թվականին, հազար դոլար	Մասնաբաժինը Մեղրիի անցակետով ապրանքների արտահանման մեջ 2025 թվականին	Մասնաբաժինը ՀՀ-ից արտահանվող այդ ապրանքի արտահանման մեջ 2025 թվականին
Սիգարետ	240220	388,291	73%	62.5%
Էլեկտրաէներգիա	271600	75,198	14%	93.3%
Ծխախոտի տաքացվող գլանակներ	240411	38,129	7%	93.1%
Պղնձի խտանյութ	260300	7,769	1%	1.2%
Ոչխարներ	010410	4,150	1%	31.9%
Խոշոր եղջերավոր անասուններ	010229	3,556	0.7%	100.0%
Մարդատար ավտոմեքենաներ	8703	3,002	0.6%	10.3%
Սիգարետի ֆիլտրեր	560122	2,672	0.5%	80.7%
Բուլդոզերներ, բեռնիչներ	8429	1,022	0.2%	13.8%
Սառեցված նարնջի հյութ (265կգ տակառներով)	200911	803	0.2%	71.9%
Շոկոլադ և կակաո պարունակող այլ պատրաստի սննդամթերք	1806	637	0.1%	2.5%

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ, ՀՀ ՎԿ

Այս համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև այն ապրանքներին, որոնք Հայաստանից արտահանվում են **Մերձավոր Արևելքի երկրներ Իրանի օդային տարածքով**: Խոսքը վերաբերում է օրինակ Հայաստանից ոչխարների արտահանմանը, որը գլխավորապես ուղղվում է Իրաք և Կատար ու հիմնականում կազմակերպվում է օդային ճանապարհով: Եթե ռազմական գործողությունները հանգեցնեն օդային ուղիների փակման և չվերթների դադարեցման, ապա այսպիսի ապրանքների արտահանումը Հայաստանից կարող է բախվել լուրջ խոչընդոտների: Նման ռիսկեր կարող են առաջանալ նաև Հայաստանից ոսկու արտահանման դեպքում:

Հարկ է նշել, որ Իրանի տարածքով առևտրային հոսքերի տրանսպորտային սպասարկումը ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, մեր խորքային հարցազրույցները ցույց են տալիս, որ Իրանից կամ Իրանի տարածքով արտահանումը և ներմուծումը հիմնականում իրականացվում է իրանական շարժակազմով: Որոշ դեպքերում հայկական տրանսպորտային ընկերությունների բեռնատարերը մեկնում են հայ-իրանական սահմանին մոտ գտնվող Նորդուզ քաղաք, որտեղ բեռները բարձվում են հայկական բեռնատարերի վրա և տեղափոխվում Հայաստան:

Տրանսպորտային ընկերությունների հետ կատարած խորքային հարցազրույցները ցույց են տալիս, որ ապրիլի սկզբի դրությամբ մատակարարման, արտահանման խափանումներ չեն արձանագրվել, սակայն որոշակի բարձրացել են տրանսպորտային ծախսերը, հատկապես, եթե երթուղիներն անցնում են ակտիվ ռազմական գործողությունների շրջանով:

Ապրիլի սկզբի դրությամբ արտահանման և մատակարարման խափանումներ չեն արձանագրվել, սակայն որոշակի բարձրացել են տրանսպորտային ծախսերը:

Հայաստանի արտաքին առևտրի հնարավոր այլ ուղիները

Ներկայում Հայաստանը հայ-իրանական սահմանով հիմնականում արտահանում է Իրան և Իրանի տարածքով՝ դեպի Իրաք և ԱՄԷ: Մինչդեռ այս սահմանով Հայաստանը հիմնականում ներմուծում է իրականացնում Չինաստանից, Իրանից և ԱՄԷ-ից:

Քարտեզ 2. Հայաստանի առևտրային ուղիները



Իրանի տարածքում ենթակառուցվածքների խաթարման և հայ-իրանական սահմանով առևտրի իրականացման անհնարինության պայմաններում Հայաստանը ստիպված կլինի որոնել այլընտրանքային ուղիներ՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունը պահպանելու համար:

Չինաստանից և ԱՄԷ-ից ներմուծման դեպքում հնարավոր տարբերակներից է ծովային փոխադրումը դեպի **վրացական Փոթի նավահանգիստ,** այնուհետև՝ Վրաստանի տարածքով բեռների տեղափոխումը Հայաստան: Քանի որ **Հայաստան-Թուրքիա** ցամաքային սահմանը ներկայումս փակ է, այս տարբերակը փաստացի դառնում է հիմնական իրատեսական այլընտրանքը: Պետք է նշել, որ եթե Հայաստան-Թուրքիա սահմանը բաց լիներ, հնարավոր կլիներ խնդիրը լուծել ավելի արդյունավետ տարբերակով: Այդ դեպքում Չինաստանից և ԱՄԷ-ից բեռները, հասնելով Միջերկրական ծովի թուրքական նավահանգիստներ (օրինակ՝ Մերսին), կարող էին Թուրքիայի տարածքով ցամաքային ճանապարհով համեմատաբար ավելի արագ տեղափոխվել Հայաստան:

Ինչ վերաբերում է արտահանմանը, ապա ամենաարդյունավետ տարբերակը կլիներ փոխադրումների կազմակերպումը **Թուրքիայի տարածքով:** Այս դեպքում բեռները Հայաստանից, անցնելով Թուրքիայի տարածքով, կարող էին հասնել Իրաք (Իբրահիմ Խալիլ/Հաբուր անցակետով), իսկ այնտեղից՝ Սաուդյան Արաբիայի տարածքով շարունակել դեպի ԱՄԷ:



Հայ-իրանական սահման
Աղբյուրը՝ hhpress.am

Իրանի տարածքում ենթակառուցվածքների խաթարման և հայ-իրանական սահմանով առևտրի իրականացման անհնարինության պայմաններում Հայաստանի համար օպտիմալ կլինի Թուրքիայի տարածքով փոխադրումների կազմակերպումը:

Եզրակացություններ և առաջարկություններ

- 2025 թվականին Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության **9%-ը** իրականացվել է Մեղրիի անցակետով, իսկ եթե բացառենք ոսկու և ադամանդի առևտրաշրջանառություն, ապա այս անցակետին բաժին է ընկնում Հայաստանի առևտրաշրջանառության 11%-ը:
- Հայաստանի ապրանքային ներմուծման **11%-ը** և արտահանման **6%-ը** իրականացվում է հայ-իրանական սահմանով:
- Հայ-իրանական սահմանով Հայաստան են **ներմուծվում** շինարարության մեջ լայնորեն օգտագործվող **երկաթից ձողեր (ատամնավոր ամրաններ), նավթային բիտում, ցեմենտ**, որոնց մեծ մասը հնարավոր է փոխարինել տեղական արտադրանքով, սակայն դա կարող է հանգեցնել շինարարության ծախսերի որոշակի աճի: Ընդ որում, 2025 թվականին Հայաստան **ներմուծված երկաթից ձողերի 89.1%-ը, նավթային բիտումը** գրեթե ամբողջությամբ, **ցեմենտի 88.4%-ը** և **թրծված մոլիբդենի խտանյութի 97.7%-ը** ներմուծվել են Մեղրիի սահմանային անցակետով:
- 2025 թվականին հայ-իրանական սահմանով ներմուծման 42%-ը կազմել են **չինական ծագման ապրանքները**, որոնց մեջ առաջատարը մարդատար ավտոմեքենաներն են: Ընդ որում, Հայաստան ներմուծվող ավտոմեքենաների շուրջ 9%-ը ներմուծվում է Մեղրիի անցակետով:
- 2025 թվականին հայ-իրանական սահմանով **արտահանման** 73%-ը բաժին է հասնում **սիգարետներին**:
- Հայ-իրանական սահմանի նշանակությունը համեմատաբար մեծ է Հայաստանից արտահանվող սիգարետների դեպքում: 2025 թվականին **Հայաստանից արտահանված սիգարետների 62.5%-ը** արտահանվել է Մեղրիի անցակետով հիմնականում ուղղվել է Իրաք և ԱՄԷ: Ընդ որում, Իրաքին բաժին է հասնում Հայաստանից արտահանվող սիգարետների շուրջ կեսը:
- Տրանսպորտային ընկերությունների հետ իրականացված խորքային հարցազրույցները ցույց են տալիս, որ ապրիլի սկզբի դրությամբ մատակարարումների և արտահանման խափանումներ չեն արձանագրվել: Սակայն նկատվում է տրանսպորտային ծախսերի որոշակի աճ, հատկապես այն դեպքերում, երբ երթուղիները անցնում են ակտիվ ռազմական գործողությունների գոտիներով:
- Իրանի տարածքում ենթակառուցվածքների խաթարման և հայ-իրանական սահմանով առևտրի իրականացման անհնարինության պայմաններում Հայաստանի համար օպտիմալ կլինի **Թուրքիայի տարածքով փոխադրումների** կազմակերպումը: Մասնավորապես, Հայաստանից Իրաք և ԱՄԷ արտահանման պարագայում սա կլիներ ամենաարդյունավետ այլընտրանքային տարբերակը:
- Ներմուծման դեպքում ևս Թուրքիայի տարածքով փոխադրումների կազմակերպումը կլիներ ավելի արդյունավետ, քան Վրաստանի տարածքով այլընտրանքը:

Քաղաքական համառոտագրում տեղ գտած կարծիքների համընկնումը Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի հետ պարտադիր չէ

ACSES վերլուծական կենտրոն
Հասցե՝ Երևան, 0010, Նալբանդյան 48/1
Հեռախոս՝ (+374 33) 200 882
Վեբ կայք՝ www.acses.am
Էլ. փոստ՝ info@acses.am

Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամ
Վեբ կայք՝ www.freiheit.org